Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 148 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՓՈՔՐ ՏԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններից դուրս եկող 18 և բարձր տարիքի անձանց համար փոքր խմբային տան վերակառուցում, կահավորում և համալրում տեխնիկայով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Իզմիրլյան» բարեգործական հիմնադրամ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Կենտրոն, Մելիք-Ադամյան 2/1, ՀՎՀՀ՝ 02819088)
4.	Ծրագիրը կատարողը	«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան 0026, Նժդեհ 42, ՀՎՀՀ՝ 02214646)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզի Ակնաշեն բնակավայր Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	100,661,690 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Շահառուներ՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում բնակվող 18 և բարձր տարիքի անձինք, որոնք չեն կարող վերամիավորվել իրենց ընտանիքների հետ և տարբեր մասնագետների կանոնավոր հսկողության կարիք ունեն: Առաջնահերթությունը կտրվի «Մարի Իզմիրլյանի անվան մանկատանը» բնակվող անձանց:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի մարտի 5-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրով նախատեսվում է Ակնաշեն բնակավայրում մեկ փոքր տան վերակառուցում, կահավորում և համալրում կենցաղային տեխնիկայով, սոցիալական տանը շահառուների տեղավորում: Փոքր տունը լինելու է երկհարկանի, ընդգրկելու է 300 քմ ներքին և 360 քմ արտաքին տարածքի վերակառուցում և բարեկարգում: Նշված փոքր տան վերակառուցումն իր մեջ ներառելու է նախագծից շեղվող հին կառույցների քանդման, նոր կառույցի կառուցման, հարդարման, կահավորման և կենցաղային տեխնիկայով համալրման աշխատանքներ, որոնք իրականացվելու են անմիջապես «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կամ պայմանագրի հիման վրա՝ մրցույթի միջոցով հաղթող ճանաչված կապալառու կազմակերպությունների միջոցով: Փոքր տունն ունենալու է հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված սարքավորումներ, վերելակներ, հագեցված է լինելու անվտանգության համակարգերով: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի մարտի 5-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը: Բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի հաստատություններում բնակվող 18 և բարձր տարիքի անձանց համար մեկ համայնքային փոքր տան անվտանգ և պատշաճ հասանելիության ապահովման համար նախատեսվող մոտարկված բյուջե՝ 100,661,690 դրամ:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Փոքր տան վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 71,864,533.56 դրամ. 2) Փոքր տան կահավորման աշխատանքների իրականացում՝ 16,897,156.44 դրամ. 3) կենցաղային տեխնիկայի ձեռքբերում՝ 1,200,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	10,700,000 դրամ, որը կազմում է ընդհանուր ծրագրի արժողության 9.82 տոկոսը: Ծրագրի ադմինիստրատիվ ծախսեր՝ 1. Փորձագետ – 1 հաստիք - 5,100,000 դրամ 2. Քաղաքականության մասնագետ – 1 հաստիք- 2,000,000 դրամ 3. Հաշվապահ – 1 հաստիք - 1,600,000 դրամ 4. Գնումների մասնագետ –1 հաստիք - 2,000,000 դրամ

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ որպես ծրագրի առաջատար կազմակերպություն, «Իզմիրլյան» հիմնադրամ և բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմին:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

04.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ